

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# ԻՆՉ Ե ԿՈՐՑՆՈՒՄ ՄԵՆԱՏՆՏԵՍԱՎԱՐ ԳՅՈՒՂԱՑԻՆ



338.1  
Զ-91

ԽՍՀՄ ԺՈՂ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉ., ԽՈՍԿՎԱ, 1931

3 APR 2013

17 FEB 2010

338.1


9-91 Ա. Ի. ԶՈՒԲՐՎ

# ԻՆՉ Ե ԿՈՐՑՆՈՒՄ

ՄԵՆԱՏՆՏԵՍՎԱՐ ԳՅՈՒՂԱՑԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՌԱՋՎԱՆ

1931



15816 - 57

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՃՈՒՄ ԵՆ

Ներկայումս Խորհրդային յերկրում չի գտնվի վոչ  
մի գյուղ, ուր գյուղացիները չխոսեն կոլեկտիվացման,  
կոլտնտեսությունների մասին։ Դա հասկանալի յէ։ Այս  
տարի ամառը, կուսակցության XVII համագումարի  
սկզբին, Խորհրդային Միության հացահատիկային ուս-  
յոններում կոլտնտեսություններում (գարնան գտու-  
մից հետո) մնաց գյուղացիական բոլոր տնտեսությունների  
գրեթե կեսը, իսկ ցանքսերի տարածությունը  
այդ միջոցին 30 միլիոն հեկտարից ավելի յեր,

Այլ կերպ ասած, վերջին յերեք տարվա ընթաց-  
քում կոլտնտեսությունների ցանքսերի տարածու-  
թյունը, ինչպես XVII կուսամագումարին մատնանշեց  
ընկեր Ստալինը, աճել է ավելի քան քառասուն անգամ։  
Այլ խոսքով, մեր կոլտնտեսությունները այժմ ունեն  
ֆրանսիայի և Իտալիայի, միասին վերցրած, ցանքսերի  
տարածության չափ տարածություն։

Կոլեկտիվացման գործը հսկայական հաղթանակներ ե  
տարել։ «Այժմ նույնիսկ կույրերը տեսնում են, վոր գյու-  
ղացիության մեջ կատարվել ե մի հսկայական արմատա-  
կան հեղաշրջում՝ հնից գեպի նորը, կուլակային ստրկու-  
թյունից գեպի ազատ կոլտնտեսային կյանքը» (Ստալին):

Սակայն, մեր յերկիրը իր տարածությամբ շատ մեծ է, և շատ տեղերում մեր գյուղերը ապրում են տակավին հին տնտեսական կարգերով, պահպանելով պապենական միջոցները։ Յեվ այդ պատճառով ել կուլեկտիվացման ծավալը ամեն տեղ միաչափ չե։ Վորոշ վայրերում կոլտնտեսությունները ընդգրկել են բացաձակապես բոլոր չքափորներին և միջակներին, իսկ այլ ռայոններում կոլտնտեսությունները չեն ընդգրկել գյուղացիական տնտեսությունների նույնիսկ մի յերրորդը։

Կուլեկտիվացման գործը մի շատ կարևոր և պատասխանատու գործ է, և մեր յերկիրը մեկ հաղթանակից գեպի մյուս հաղթանակը տանող կոմունիստական կուսակցությունը աշալուրջ հետեւում ե այդ գործի դարպացմանը։

«Կոլտնտեսությունները — ասված ե կուսակցության XVII համագումարի բանաձեռի մեջ — կարող են կազմակերպվել միայն կամավորության հիմունքներով։ Զքափորական միջակային մասսաները կոլտնտեսության մեջ միացնելու նպատակով՝ բռնության կամ վարչական հարկադրանքի վորևե միջոցի գործադրությունը հանդիսանում ե կուսակցական գծի կոպիտիստական և իշխանության ի չարը գործադրություն։

Կուսակցական համագումարի այս վորոշումը ամբողջին արդարացվում ե իրականությամբ։ Զե՞ վոր ամբողջ կոլտնտեսային փորձը ցույց տվեց, վոր կոլտնտեսությունները կարող են աճել և ամրանալ միայն

այն դեպքում, յերբ նրանք բաղկացած են՝ կոլեկտիվի մեջ միանգամայն կամովին միացած գյուղացիներից։ Իսկ գյուղացիները պատահաբար չե, վոր մտնում են կոլտնտեսությունների մեջ։ Զքափոր ու միջակ գյուղացիները անձնապես հենց իրենց որինակների վրա որ ըստ որեւ համոզվում են կոլտնտեսությունների առավելության և շահավետության մեջ։

Դրա համար ել կոմունիստական կուսակցությունը յերբեք չի հանդուրժի այն աշխատողներին, վորոնք ջանք են թափում թղթե կոլտնտեսություններ հիմնելու։ Կոմունիստական կուսակցությունը շատ լավ գիտե, վոր չքափոր ու միջակ գյուղացիները վաղ թե ուշ կհամոզվեն կուլեկտիվ տնտեսության շահավետության մեջ և կամովին կմտնեն կոլտնտեսությունների մեջ։ Իհարկե, շատ մեծ սխալ կլիներ, յեթե գյուղական կուսակցական բջիջները և բոլոր գիտակից կոլխոզնիկները, այդ հույսերով տարված, արդեն իսկ հանդստանային։

Հույս դնել միայն «ինքնահոսի» վրա վոչ մի դեպքում չի կարելի։ Գյուղում՝ յուրաքանչյուր կուսակցական բջիջ, յուրաքանչյուր կոմունիստ, յուրաքանչյուր գիտակից կոլտնտեսավար պետք ե մշտապես, ոգտագործելով ամեն մի առիթ, բացատրի և համոզի դեռ կոլխոզ չմտած չքափոր ու միջակ գյուղացիներին կուլեկտիվ տնտեսության ոգտակարությունն ու հսկայական շահավետությունը։

Կոմունիստական կուսակցությունը այն կարծիքին ե, վոր «միակ միջոցը, վոր գյուղացիներին կարիքից

և խավարից աղատվելու յելք և հանդիսանում՝ կոլտնտեսությունն եւ։ Միայն կոլեկտիվացումը կարող ե աղատել գյուղացիությունը կարիքի, դարձավոր աղքատության և կուլակների ճիրաններից։

Վլաղիմիլը իլլիչը միշտ ասում եր, թե ապրել այնպես, ինչպես ապրում եր առաջ չքավորությունը, այսինքն ապրել աղքատության մեջ, չի կարելի, և վորանհրաժեշտե յելք վորոնել։ «Այնպիսի մի աշխատանք, — ասում եր նա — յերբ գյուղացին աշխատում եր իր հոգամասի վրա, իր տավարով, իր թռչնաբուծությամբ, իրովով, գութանով և այն, մենք շատ տարիներ ու գարեր ենք տեսել. մենք շատ լավ գիտենք, վոր Խուսաստանում և այլ յերկրներում դրանից առաջանում երկ գյուղացիական չքավորություն, խավարամտություն, հարուստների տիրապետությունը աղքատների վրա, վորովնեաւ անջատված լուծել այն խնդիրները, վորոնք գրված են գյուղատնտեսության առաջ, չի կարելի։ Կարելի յե կրկին ստանալ նույն նախկին աղքատությունը, վորի պայմաններում հարցուրից մեկը կամ գուցե հարյուրից ինչը հարստանում են, իսկ մնացածները ապրում են աղքատության մեջ։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից արդեն մի տարի հետո, այսինքն 1918 թ. ընկեր Լենինը կոմունաների և չքավորության կոմիտեների համագումարում ապացուցում եր, վոր «յերկու և յերեք անգամ կբարձրանար աշխատանքի արտադրողականությունը, յերկու և յերեք անգամ ավելի խնայված կլի-

ներ յերկրագործության մեջ մարդկային աշխատանքը, յեթե ջլատված մանր տնտեսությունը վերափոխվեր համայնացված տնտեսության։

## ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՊՐՈԲԼԵՄԻՑ ՀԵՏՈ — ԳԼԽԱՎՈՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆԸ

Այժմ բոլորին հայտնի յէ, թե ինչպես ե բարգավաճում մեր ամբողջ տնտեսությունը։ Մեր տնտեսության բարգավաճման արագությունը կամ, ինչպես այժմ ասում են, մեր բարգավաճման տեմպերը զարմացնում են ամբողջ աշխարհը։ Մենք առաջ ենք գնում հսկայական յոթմիլանոց քայլերով։ Յեկ ահա մեր ամբողջ տնտեսության այդ բարգավաճման հետ համեմատելով, պարզվում է, թե վորքան յետ և մնում գյուղատնտեսությունը։

Մինչդեռ իր սոցիալիստական շինարարությունը զարգացնող յերկիրը, ինչ զնով ել լինի, պետք ե տպահովի իրեն հացի պակասից։ Յեկ հենց այդ պատճառով ել հացահատիկային պրոբլեմը այժմ գյուղատնտեսության ամենազդլավոր պրոբլեմն ե հանդիսանում։ «Հացահատիկային պրոբլեմը, — ասում ե ընկ. Ստալինը — գյուղատնտեսության սխատեմի հիմնական ողակն ե և գյուղատնտեսության այլ պրոբլեմների լուծման բանալին»։ Այժմ մենք հիմնականում արդեն լուծել ենք հացահատիկային պրոբլեմը։ Այլ խոսքով, մենք լուծել ենք առաջին հերթ իխնդիրը գյուղատնտեսության մեջ։

Սակայն հացահատիկային պրոբլեմը վերջնականորեն լուծելու համար, ամբողջ գյուղատնտեսությանը ուժեղ զարկ տալը ապահովելու համար — շատ բան ե հարկավոր։ Առաջին հերթին պետք է ապահովել մեր գյուղատնտեսությունը արակտորներով, կոմբայններով, նոր մեքենաներով, տալ գյուղին հազարավոր ազգունումներ, այսինքն կատարել մի այնպիսի աշխատանք, վորը հնարավորություն ե տալիս գյուղատնտեսության արդյունավետությունը բարձրացնելու։

Հարց ե ծագում, թե կարելի յե, արդյոք, մանր անհատական գյուղացիական տնտեսության պայմաններում կատարել այդ հսկայական գործը։ Այդ հարցին պատասխանեց ընկ. Ստալինը կուսակցության XVI համագումարում արած իր ղեկուցման մեջ։

«Վոչ, անհնարին ե, — ասաց նա: — Անհնարին ե, քանի վոր մանր-գյուղացիական տնտեսությունը վիճակի չե ընդունելու և յուրացնելու նոր տեխնիկան, վիճակի չե աշխատանքի արտադրողականությունը բարվար չափով բարձրացնելու, վիճակի չե գյուղատնտեսությունը բարվականացավարի բարձրացնելու»։

Ապա ի՞նչ պետք ե անել կացությունը փրկելու համար, ի՞նչ յելք ե մնում։

«Մնում ե, — ասում ե ընկ. Ստալինը, — միայն մի ճանապարհ, — գյուղատնտեսության խոշորացման ճանապարհը, ժամանակակից տեխնիկայով զինված խոշոր տնտեսությունների ճանապարհը։ Բայց Խորհրդային

յերկիրը չի կարող խոշոր կապիտալիստական անտեսությունների կազմակերպման ուղին բռնելու նա կարող ե և պետք ե գնա նոր տեխնիկայով զինված սոցիալիստական ախալի խոշոր տնտեսությունների կազմակերպման ուղիով։ Այդպիսի անտեսություններ մեզ մոտ հանդիսանում են խորհրդային և կոլեկտիվ անտեսությունները»։

Ասել ե, միակ յելքը՝ կոլեկտիվացումն ե, Այդ ճանապարհն են բռնել բոլշևիկները և նրանց հետ միասին նոր գյուղի բոլոր գիտակցից խավերը։ Դեռ կուսակցության XV համագումարում, այսինքն սրանից յերկու ու կես տարի առաջ, բոլոր կուսակցական կազմակերպություններին արված եր հետևյալ ցուցումը.

«Ներկա շրջանում մանր-անհատական (մենատնտեսավար) գյուղացիական տնտեսությունները խոշոր կոլեկտիվների վերաբիոխելու և միացնելու խնդիրը պետք ե գյուղի վերաբերմամբ կուսակցության անելիքներից հիմնականը հանդիսանա։» (XV համագումարի բանաձեկից)։

Կոլեկտիվացման ուժեղ զարգացումը հնարավոր յեղակ միայն իբրև հետեանք կուսակցության տարած հաստատ գծի, վորը հետևողաբար իրավործում եր իր համագումարների վորոշումները։ Դրանով ե բացարկում այն, վոր արդեն 1930 թ. կոլխոզները ապին պետությանը այնքան հաց, վորքան առաջ շուկա յեր նետում ամբողջ կուսակային տնտեսությունը միջային և չքավորական տնտեսությունների հետ միասին։

Սա — առաջին խոշորագույն հաղթանակներ, վորին կհետեւն վոչ պակաս խոշոր հաղթանակները:

Սրանից հետո, յերբ մենք հիմնականում լուծել ենք հացահատիկային պրոբլեմը, նրա վերջնական լուծման համար պայքարելով հանդերձ, անհրաժեշտ ե բոլոր ուժերը մոռիկացայի յենթարկել մի այլ կարևորագույն խնդիր — անասնապահության պրոբլեմը լուծելու համար: Զորեղ, սոցիալիստական անասնապահություն ստեղծելու նշանակությունը իր ամբողջ սրությամբ ընդգծեց կուսակցության XVI համագումարը:

Մոտակա տարիները անասնապահության զարգացման գործում մեր ուշադրությունը հիմնականում կենտրոնացած պետք ելինի խոզաբուծության վրա: Պատականանություն չե, վոր Համեկ (բ) XVI համագումարը վորոշել է հատուկ «Սվինովդ» («Խոզաբույծ») տրեստը ստեղծել, վորը արդեն 1931 թ. պետք ե տպահովե պետությանը վոչ պակաս, քան 3 միլիոն խոզ, 1932 թ. — մոտ 7 միլիոն:

Խոշոր անասնապահական տնտեսություններ կազմակերպելու համար ստեղծված ե «Սկոտվոդ» («անասնաբույծ») տրեստը, վորը 1931 թ. պետք ե հասցնելը հոտերը մինչև 3 միլիոնի, իսկ 1932 թ. — 10 միլիոն գլուխ մսատու անասնուների:

Աջ ոպպորտունիստների մարգարեւթյուններին հակառակ, անասնապահության զորդացման համար դրվում ե զորեղ սոցիալիստական բազա (խո-

զաբուծական և անասնաբուծական սովորություններ): Սովորողների հետ միասին անասնապահական պրոբլեմը լուծելու յին կոլխոզները, նրանք ել կողնեն իրագործելու կուսակցության XVI համագումարի վորոշումը թեթև ինգուստրիայի հումույթային բազան ընդարձակելու, տեխնիկական և յուղաբեր մշակույթների ցանքսերը ընդլայնելու և բերքատվությունը բարձրացնելու մասին:

Կոլեկտիվացման գաղափարը տարեց տարի ավելի ու ավելի յեթափանցում նոր հարյուր հազարավոր գյուղացիական անտեսությունների խորքը, ամսեամիս կոլեկտիվացմարների բանակը լրացնում են գյուղի առաջավորների նորանոր ջոկատները:

Պետք ե հիշել, վոր այսորվա յուրաքանչյուր մենատնտեսավար գյուղացին — վաղվա կոլխոզնիկն եւ Յեվ բոլոր կազմակերպությունների առաջ դրված ե չքավորների նորանոր մասսաներին և չքավորբատրակային տնտեսությունները կոլեկտիվների մեջ ներգրավելու խնդիրը: Բայց, դժբախտաբար, շատ թույլ ե տարվում մասսայական աշխատանքը մենատնտեսավարների մեջ: Մեր կոլխոզնիկները շատ հաճախ առանձնանում են մենատնտեսավարներից, ոգնություն և աջակցություն ցույց տալու փոխարեն յերեմին խանգարում են նրանց աշխատանքին, վատ են վերաբերվում դեպի մենատնտեսավարները և կամ, վոր ավելի վատ ե, հետապնդում են նրանց: Ահա թե ինչու կուսակցության XVI համագումարը հատուկ վորոշու-

մով պարտավորեցրեց բոլոր կազմակերպություններին՝  
«Ճետապնդել մենատնտեսավարներին, այլ ողնություն  
ցույց տալ նրանց և ամեն կերպ կոլտնտեսություն-  
ների մեջ քաշել»:

## ԻՆՉ ՈԳՈՒՏ Ե ՏԱԼԻՍ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մենատնտեսավարը լավ չի գիտակցում կոլտնտե-  
սության տված ոգուտը: Իսկ չե վոր կոլտնտեսության  
մեջ աշխատելու շահավետությունը կարելի յե ապա-  
ցուցել ամենապարզ որինակներով,

Հայտնի յե, վոր գյուղացիների արտերում վոչ մի  
կարդ չկա, Դարերից ի վեր ընդունված ե, վոր յու-  
րաքանչյուր 50 տնտեսությունից միայն 45-ը հող  
ունեն, այն ել ի՞նչ հող — միայն հողաշերտեր՝ ամ-  
բողջ գյուղացիական հողը բաժան-բաժան ե արված  
20 — 30, նույնիսկ 50 հողաշերտերի:

Ապա, ամեն մի գյուղացու հայտնի յե նույնպես,  
վոր մենատնտեսավարի հողը շատ հաճախ ցրված ե  
10 տեղ: Հարց ե ծագում, թե դրանից ի՞նչ ոգուտ  
կա: — Իհարեւ, վոչ մի ոգուտ: Հաշվել են, վոր կեն-  
տրոնական շրջանի նահանգներից մեկում, ամբողջ հողը  
շերտերի բաժանված լինելու շնորհիվ, միայն շերտերի  
միջև յեղած տարածությունները անցնելու համար  
տարեկան պետք ե անցնել հազարից ավելի կիլոմետր  
ճանապարհ: Այս բոլորը շատ թանգ ե նստում: Վիճակա-  
զրողները հաշվի յեն առել նույնպես, վոր շերտամիջ-

ման շնորհիվ յուրաքանչյուր հարյուր հեկտարից կոր-  
չում ե սահմանածրերին գտնված մոտ 10 հեկտար հող:

Յեթե հաշվի առնենք, թե այդ պատճառով ինչքան  
պակաս հաց են հավաքում գյուղացիները — կատացվի  
խոշոր թիվ, իսկ Խորհրդային Միության մեջ սահ-  
մանածրերի շնորհիվ ապարդյուն ե մնում մոտ 10 մի-  
լիոն հեկտար հող: Այլ խոսքով, ամեն տարի մեր յեր-  
կիրը զրկվում ե մոտ 6.500 հազար տոնն կամ 390 մի-  
լիոն փութ հացահատիկից:

Ոյն հանգամանքը, վոր գյուղատնտեսության մեջ  
զուր տեղը շատ հող ե փշանում, առաջ ե բերում  
ևս մի վնաս: Սահմանածրերը նվազեցնում են բերքը,  
աղտոտում են հացահատիկները աղբախոտերով և,  
հետևաբար, գյուղացիական անտեսությանը հսկայա-  
կան վնասներ են հացնում: Այլ բան են — կոլտնտե-  
սությունները: Կոլտնտեսության մեջ կարելի յե աշ-  
խատել այլ կերպ: Կոլտնտեսության մեջ ավելի շատ  
հնարավորություններ կան տրակտորներ, մեքենաներ  
և նոր տեխնիկա գործադրելու: Միասին, կոլեկտիվ  
կերպով ավելի գյուրին ե բերքը բարձրացնելու, հա-  
ցահատիկի վորակը ազնվացնելու համար պայքար տա-  
նելը: Կոլտնտեսավարներին մեքենաները հնարավո-  
րություն են տալիս իրենց արտերի բերքը բարձրա-  
ցնել մինչ այդ չտեսնված չափերով:

Այս բոլորում մենք հավաստիանում ենք կյանքից  
և մեր կոլտնտեսությունների աշխատանքից: Հարյու-  
րավոր, հազարավոր կոլտնտեսություններ արդեն ապա-

ցուցում են կոլեկտիվ անտեսությունների առավելությունները մենատնտեսավարների հանդեպ; Ինչումն են կայանում այդ առավելությունները:

«Կոլտնտեսություններում միայն գյուղացիական գործիքների միացումը, — ասում ե ընկ. Ստալինը, — այնպիսի մի եֆֆեկտ տվեց, վորի մասին մեր պրակտիկները նույնիսկ չելին յերազում: Ինչումն եր արտահայտվում այդ եֆֆեկտը: Նրանում, — շարունակում ե ընկ. Ստալինը — վոր կոլտնտեսության անցնելը ընդլայնեց ցանքսի տարածությունը 30, 40 և 50%-ով»:

Այսպիսի հաջողությունը ամենից առաջ բացարձում ե նրանով, վոր գյուղացիները անհատական (մենատնտեսական) աշխատանքի պայմաններում անզոր լինելով, հսկայական ուժ դարձան իրենց գործիքները գումարելով և կոլտնտեսություններում համախմբվելով». ապա նրանով, վոր «գյուղացիները հնարավորություն ստացան մշակելու խամ հողերը և այն հողերը, վոր դժվար ե մշակել մենատնտեսավարական աշխատանքի պայմաններում»: Ապա նրանով, վոր «գյուղացիներն հնարավորություն ստացան իրենց ձեռքը առնել խամ հողը», վերջապես նրանով, «վոր հնարավորություն ստացվեց ոգտագործելու պարագ հողերը, առանձին հողաբաժինները, սահմանածքերը և այն»:

Ընկ. Ստալինի այս բոլոր ասածները հաստատվում են կոլտնտեսավարների համառ աշխատանքով, վորքը և մեծ հաղթանակներով, վոր ամեն որ տանում են գյուղատնտեսության հեղափոխականները:

Թե ինչ արդյունքի հասան կոլտնտեսությունները — բերենք մի շարք որինակներ:

Ոյտժոկ քաղաքից վոչ հեռու Մալայա Ալյոշնյա գյուղում կա կիսելյովի արտելը: Մոտ ժամանակներս գյուղի այդ առաջին կոլեկտիվ բջիջի հիմնվելու տասնամյակը լրացավ: Շրջակա գյուղացիները շատ լավ են հիշում այդ արտելի հինգ կազմակերպիչներին: Դրանց թվում են — Կոգոտկովը, Ֆրոլովը, Փորձված, հեղափոխությանը նվիրված, ազնիվ և փորձառու աշխատողներ:

Կիսելյովի արտելը ամբողջ ժամանակ զարգացնում եր իր տնտեսությունը իր միջոցներով, առանց վորեւ վարկ ստանալու: Արտելի հենց ստեղծման որից ընդունված եր ութզաշտային ցանքսափոխություն յերկու առվույտով և հերկդաշտով: Կոլտնտեսավարները առաջին հերթին մտցրին ցրտահերկում, հատիկների զտում, շարքացան, սեահերկ և վաղահերկ:

Կոլիխողը կենտրոնական Գյուղացու Տան միջոցով մի անգամ ստացավ մի քանի տասնյակ կիլոգրամ հաճար և 32 կիլոգրամ ցորեն Տիմիրյագեի ակադեմիայից: Բարձր տեսակի հատիկն ու կոլտնտեսավարների գիտակից աշխատանքը արագ կերպով հասցրին չտեսնված արդյունքի: Կոլտնտեսավարների բերքը յերկու անգամ ավելի յեր մենատնտեսավարների բերքից:

Հետզհետե կիսելյովի արտելը մեքենաներ ձեռք բերեց: Կոլտնտեսավարները ձեռք բերին հատիկը զտող, մաղող և բերքահավաք մեքենաներ: Հետո ձեռքերն

լնկավ և Փողգոնը, վոր կոլտնտեսավարներին լնծայել եր հողբաժինը, ապա և կալսիչ մեքենաներ և աղացներ: Կոլխոզի տնտեսության արժեքը գնահատվում եր արդեն մի քանի տասնյակ հազար ռուբլի, փոխարեն այն 400 ռուբլու, վորով կոլտնտեսավարները աշխատանքի ելին անցել:

Վերջին ժամանակներս ամեն տարի կիսելովի կուտնտեսավարները ծախում են մի քանի տասն մասմթերքներ և միենույն ժամանակ ավելի ու ավելի ուժեղացնում են և զարգացնում անսամապահությունը: Կոլտնտեսության աշխատանքը, նրա հաղթանակները չելին կարող անհետևանք մնալ շրջակա գյուղերի համար: Կիսելով ցինիքների որինակին հետևեցին այլ գյուղացիներ, վորոնք հիմնեցին մի շարք կոլտնտեսություններ և հողը միացյալ ուժերով մշակելու ընկերություններ:

Մի այլ տեղ — Ոմսկի շրջանում — արդեն մի քանի տարի յէ, վոր գոյություն ունի „Юնայթ պահար“ կոմունան: Այդ կոմունան կաղմել են 6 կոմյերիտականներ և 5 չքափոր տնտեսություններ: Կոմունարների այն ժամանակ ունեցած վողջ գույքը բաղկացած եր՝ մի ձիուց, յերկու լղար կովերից և մի քանի վոչխարներից: Դժվար տարիներ ելին կոմունարների համար հետագա տարիները: Սով, ցուրտ, քայքայում:


Վողջ յերկիրը գտնվում եր անթիվ թշնամիների ողակում: Հաց չկար, չկար հագուստ: Սակայն „Юնայթ պահար“-ի կոմունարները հաղթահարում են բոլոր

դժվարությունները և համառորեն ամրապնդում կոմունայի գործը: Սկզբում կոմունան վկաս եր կրում: Կոլտնտեսավար գյուղացիները պատրաստված չելին կոլեկտիվ աշխատանք վարելու, իսկ վոր վլխավորն ե, նրանք մեծ դժվարությամբ ելին համաձայնվում հողի շահագործման տեխնիկայի բարձրացմանը: Բայց դա յերկար չտեսեց: Շուտով կոլտնտեսավարները մտցրին ասսներկու դաշտային ցանքսափոխություն:

Այդ միջոցի գործադրության շնորհիվ կոմունայի բերքը խիստ բարձրացավ: „Юնայթ պահար“-ը սկսեց արագոր! ն բարձրացնել իր արդյունքը և մեծացնել իր տնտեսությունը: 1927 թ. կոմունարները ցանեցին 458 հեկտ., իսկ մի տարի հետո 1820 հեկտ.: 1928 թ. կոմունարների մի հեկտար հողի բերքը հասնում եր 16 ցենտների՝ հանդեպ մենատնտեսավարների 6 ցենտների:

Զարմացնելով վողջ շրջանը, „Юնայթ պահար“-ի կոմունարները ձեռք բերին տավարի հոտեր, գերմանական ցեղի և այլ ազնիվ ցեղի ձիյեր և կովեր: Կոմունարների ցեղային վորձերը սկսեցին սպասարկել մենատնտեսավարների տավարին: Կոմունայի տավարի ելեքտրական լույսով լուսավորված կացարանները իրենց մաքրությամբ և հարմարություններով մենատնտեսավարների զարմանքի առարկա յեն դարձել:

„Юնայթ պահար“-ի կոմունարները ամեն տարի մի քանի տասնյակ հազար ռուբլի մաքուր շահ են ստանում: Կոմունան ունի ազգային անվական աղաց, տրակ-



սորի / արհեստանոց, աբակտորային դասընթացներ, վականագործական արհեստանոց, հյուսնոց, ատաղձագործանոց, կոշկակարանոց և այլն:

Գրեթե միշտ կոլտնտեսությունները բարձրացնում են իրենց բերքը և զրեթե միշտ ավելացնում են իրենց ցանքսի տարածությունը: «Թրոնառովիկ» կոչվող կոլտնտեսությունը (Սամարայի շրջանի Մոնաստըրսկի շենում) շատ կարճ ժամանակամիջոցում համարյա թե յերկու անգամ ավելացրեց իր ցանքսի տարածությունը:

Մինչ կոլտնտեսության հիմնելը գյուղացիները յուրաքանչյուր հեկտար հողից ամենահաջող բերքի դեպքում ստանում եին 13 ցենտներ (80 փութ) հաճար, իսկ այժմ ստանում են մինչև 25 ցենտներ, այսինքն առաջվանից յերկու անգամ ավել:

«Մենք այժմ ավելի լավ ենք ապրում — պատմում են կոլտնտեսավարները: Հաց՝ փորքան ուղես, և վոչ միայն հաց: Առաջ ապրում եինք վայրենիների պես, վոչինչ չգիտեյինք, յերբեք վոչինչ չեյինք կարդում, իսկ այժմ ստանում ենք և կարդում լրագրներ, ամսագրեր, գրքեր: Իսկ ինչ վերաբերվում է ագրոնոմին, նա այժմ մեր ամենագլխավոր հյուրն ե:

Ուկրայնայում այժմ կան կոլտնտեսություններ, վորոնք բերքատվությամբ ավելի առաջ են անցել, քան Ամերիկայի ֆերմերային տնտեսությունները, վորոնք դեռ քիչ ժամանակ առաջ իրենց բերքատվությամբ և արդյունավետությամբ ամենաորինակելի տնտեսությունների համբավ ունեյին: Իսկ այժմ մեր կոլտնտեսու-

թյուններից վոմանք քաղում են մոտ 4 տոնն բարձր տեսակի ցորեն — սա արգեն այնպիսի մի բերք ե, վորի նմանը չքավոր և միջակ գյուղացիությունը չի ունեցել Ռուսաստանի գոյության վողջ ժամանակամիջոցի ընթացքում:

Առանձնապես արդարացնում են իրենց նշանակությունը խոշը կողեկտիվ տնտեսությունները: Շատ ուայոններում փոքր կոլտնտեսությունները միանում են և կազմում խոշոր գյուղատնտեսական արտելներ: Այդպիսի արտելների ցանքսի տարածությունը հազարավոր հեկտարների յե հասնում, շնչերի ընդհանուր քանակը համարվում է հազարներով: Հայտնի յե, վոր վորքան ավելի մեծ ե տնտեսությունը, այնքան ավելի շատ արդյունք ե տալիս նա: Բոլոր մեքենաների միացումը հնարավորություն ե տալիս ցանքսի տարածությունը ավելի լայնացնելու: Այդպիսի արտելները գործադրում են ութզաշտային, վեցդաշտային ցանքսափոխություն, ամբողջ հողը ոգտագործվում է ավելի լրիվ կերպով և ավելի բարձր արդյունքով: Բացի այդ, կոլտնտեսությունները մի արտելի մեջ միանալով, տնտեսում են կոլտնտեսությունների վարչության ծախքերը:

Խոշոր կոլտնտեսություններից կարելի յե հիշել „Заветы Ильинца“ կոլտնտեսության աշխատանքները: Այս կոմունան այժմ գրավում է 19 հազար հեկտ. հող և համախմբում է 788 շունչ: Կոմունան գտնվում է Հյուսիսային կովկասում, Սավսկի շրջանում. շատ հետաքրքիր ե նրա կաղմակերպության պատմությունը:

1920թ. ֆրոնտից վերադարձած կարմիր բանակայինները և տեղական պարտիզանները ստեղծում են շրջանում առաջին մի քանի կոմունաները։ Սկզբում կոմունարները բացի իրենց տնտեսության մեջ աշխատելուց ստիպված եյին անընդհատ պաշտպանվել սպիտակ գվարդիականների հարձակումներից։ Սոված և մերկ, նրանք հաճախ հրացանը ձեռքին պաշտպանում եյին իրենց նոր կերպով աշխատելու իրավունքը։ Իհարկե, այդ հանգամանքը խանդարում եր կոմունարների տնտեսական աշխատանքին, իսկ վոր գլխավորն ե, խլում եր կոմունարներից փորձված, սկսած գործին նվիրված ընկերներ։ 1920 թ. սպիտակ գվարդիականների բանդաները սպանել են 11 կոմունար, իսկ մի գյուղացույել կախել են սպիտակ ավագակները։ Սակայն կոմունարների գործը շարունակվում եր և շատ շուտով տեղական կոմունաները միացան մի խոշոր տնտեսության մեջ։

Կոմունարները հաշվի առան, վոր խոշոր տնտեսության մեջ ավելի գյուղին, խնայողաբար և վոր գլխավորն ե, արդյունավետ կլինի աշխատելը։ Այսպիսով, վեց կոմունաների փոխարեն ծնվեց մի խոշոր կոմունա, վորը կոմունարները անվանեցին „Զաւետ Իլյիչա“, Վլադիմիր Իլյիչ Լենինի հիշատակին։

Խոշոր կոմունա ստեղծվելուց իսկ սկսվեց նրա արագ աճումը։ Ամենից առաջ կոմունարները ձեռքդարկին գարնանացանի տարածության ընդարձակմանը, Յեղ այստեղ բոլորը համոզվեցին, թե ինչ և նշանա-

կում կոլեկտիվի ուժը։ Գարնանացանի կամպանիայի հետևանքով կոմունան ավելացրեց իր ցանքսի տարածությունը 259%-ով հանդեպ անցյալ տարվա առանձնակի գործող վեց կոմունաների ցանքսի հրապարակին։

Կոմունարները ստիպված եյին լինում մշակել խամ հողերը և 12 տարվա ընթացքում անմշակ թողած հողերը։ „Զաւետ Իլյիչա“ կոմունան գարնանացան ունի 2973 հեկտ.։ Բացի այդ, ավելի քան 5 հազար հեկտար հող առանձնացված ե խաշնաբու ծության համար։ Կոմունան այժմ ունի 9 հազար վոչխար, վորոնցից 6 հազարը նրբաբուրդ և 3 հազարը — կոպտաբուրդ։

Մոտ ապագայում „Զաւետ Իլյիչա“ կոմունային սպասում են նոր հաղթանակներ։ Տեղական մենատնտեսավար գյուղացիները, տեսնելով կոմունայի աշխատանքը, սկսեցին վարչությանը տասնյակ խնդիրներ ներկայացնել՝ իրենց կոմունայի անդամ ընդունելու համար։

Այսպիսով „Զաւետ Իլյիչա“ կոմունայի գորեղությունը տարեց-տարի և ամսեամիս աճելու յեւ կոմունայի շնչերի թիվը հազարից անց եւ իսկ յերբ շատ ե մարդկանց թիվը — շատ եւ աշխատանքը, շատ ե հացահատիկը, շատ ե արդյունքը՝ — թե իրենց և թե պետության համար։

Կենտրոնական շրջանի Ոստրովսկի ույսոնի կոլտնտեսավարները կուսակցության XVI համագումարի նախորյակին հարվածային կարգով ցանել են պլանից դուրս 14 հեկտ. արեածաղիկ և 5 հեկտ. գինձ (կո-

բիանդը): Լենինյան կուսակցության համագումարին՝  
այդ նվերն անելու նրանք լիովին իրավունք ունեին:  
Ոստրոգոժսկի կոլտնտեսավարները, ի զարմանա բոլոր  
գյուղացիների, մի քանի հարյուր հեկտարի ցանքսը  
վերջացրել են մի քանի որվա ընթացքում:

Համերաշխ, ընդհանուր ջանքերով, յերգ ու խա-  
ղով, արակարողներով, ընդհանուրի միջոցներով ձեռք  
բերած լավագույն մեքենաների ոգնությամբ կենտր.  
Աջանի կոլտնտեսավարները ավարտեցին իրենց դաշ-  
տային աշխատանքները նշանակված ժամկետից առաջ:

Իհարկե, բոլոր կոլտնտեսությունները այդպես լավ  
չեն աշխատում: Շատ կոլտնտեսություններ աշխա-  
տում են ավելի վատ, քան մենատնտեսավարները:  
Այդ հետևանք ե այն հանգամանքի, վոր այդպիսի կոլ-  
տնտեսությունների կազմակերպիչները աշխատանքի  
անընդունակ են և կամ այն հանգամանքի, վոր կոլ-  
տնտեսությունների վարչությունների մեջ սպրդել են  
կուլակներ, տերտերներ, դասակարգային թշնամու-  
գործակալներ, վորոնք ձգտում են ներսից կոլտնտե-  
սությունը պայմանական իրագործելու  
համար վասարարության բազմազան միջոցների յեն  
դիմում: Կոլխոզներում անկանոն կերպով տարվող աշ-  
խատանքի հետևանք են հանդիսանում՝ կոլխոզների  
արտադրողականության նվազումը, առանց պլան աշ-  
խատանքը և այլ ամենակոպիտ սխալներ:

Ահա, որինակ, մոտիկ անցյալում „Կրепость ком-  
мунизма“ («կոմունիզմի ամրոց») կոմունան, վորը

գտնվում է ներքին վոլգայի շրջաններից մեկում, վերին  
աստիճանի վատ աշխատանքի որինակ ցույց տվեց:  
Կոմունայի ղեկավարները ցրտավարի տարածու-  
թյունը վորոշել եյին հասցնել 14 հազար հեկտ., իսկ իրա-  
կանությունը ցույց տվեց, վոր միայն 7 հազար հեկտ.  
կարող ե լինել: Այլ խոսքով, կոմունարներին առաջա-  
դրված ե ցանել մոտավորապես 11 հեկտ. ամեն մի  
քարշի միավորի համար: Խոսք չկա, վոր այդ առաջա-  
դրանքը իրագործելի առաջադրանք ե: Սակայն կոմու-  
նարները արել են մի շարք սխալներ: Կոմունայի  
ըրիգադների մեծամասնությունը, անծանոթ լինելով  
ցանքսի պլանին, գերակատարում եր իրենց նորման  
կամ ընդհակառակը — շատ քիչ արտադրանք տալիս:  
Բրիգադների աշխատանքի հետևանքները ընդհանուր  
քննության առարկա չեյին դառնում, կոլտնտեսավար-  
ները տեղյակ չեյին ցանքսի ընթացքին և աշխատում  
եյին խարիսափելով: Կոմունարները չեյին հոգացել կո-  
լոննաները ջրի և նավթի ամաններով ապահովելու  
մասին, տրակտորները ապահոված չեյին յուղանյու-  
թերով: Այս բոլորը, իհարկե, քանդում եր աշխատանքը:  
Ըստ գործյա աշխատանքները կոմունայում վոչ վոք  
հաշվի չեր առնում, կոմունարներին տրվում եյին հա-  
կասական ցուցումներ: Բացի այդ իրենք կոլտնտեսա-  
վարները չեյին կատարում ագրոնոմի տված ցուցում-  
ները: Այս բոլորը շատ վատ հետևանք ունեցալ՝ ցանքսի  
35 որվա աշխատանքով կոմունան կատարեց իր պլանի  
կեսից մի քիչ ավելի:

Սա վաստ աշխատանքի որինակ եւ իսկ վորպեսզի հնարավոր լինի այդ վաստ աշխատանքից խուսափել, անհրաժեշտ եւ ուժեղացնել կոլտնտեսավարների աշխատանքը և աշխատել խստագույն պլանի և հաշվառության հիմունքներով։

Ամեն մի կոլտնտեսավար պետք եւ իրեն ճանաչի եր կոմունայի տեր, և յեթե ինքը եր խաղեինի աչքով նկատի վորեե անկարգություն ու անկանոնություն — նա պետք եւ անմիջակես հաղորդի այդ մասին արտադրական խորհրդակցությանը կամ կոմունայի ժողովին։

## ՄԵՆԱՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ ԿՈՐՈՒՏՆԵՐԸ

Յուրաքանչյուր՝ դեռ կոլխոզ չմտած մենատնտեսավար տնտեսության տեսակետից շատ բան եւ կորցնում։ Մենք մի քանի որինակներով արդեն ցույց տվինք կոլեկտիվում աշխատելու առավելությունները։

Կոլտնտեսության մեջ աշխատելու հսկայական ոգուտները կայանում են նաև նրանում, վոր կոլտնտեսությունները արդարացի յեն մոտենում բերքի բաշխմանը։

Հարյուրավոր կոլխոզների որինակներով կարելի յե ապացուցել, վոր կոլտնտեսավարը դաշտի աշխատանքից զգալի չափով ավելի շատ եւ շահում, քան մենատնտեսավարը։ Միթե մտածում եյին, որինակ, „Հեզամօջնիկ“ կոլտնտեսության մեջ աշխատող դյուդա-

ցիները, վոր իրենք կունենան այնպիսի վայլուն հաշողություն, վորպիսուն արժանացան բերքից հետո իսկ այն, ինչ զատահեց „Հեզամօջնիկ“ կոլտնտեսության մեջ, չափազանց ուսանելի յե։

„Հեզամօջնիկ“ կոլտնտեսությունը վաղուց չե վոր գոյություն ունի։ Խերսոնշինայի Բրիտանի գյուղում, ուր այժմ գտնվում եւ „Հեզամօջնիկ“ կոլտնտեսությունը, յերբեմն ափրապետում եր ֆրանսիացի կալվածատեր Բրիտեն։ Տարիքավոր գյուղացիները շատ լավ են հիշում թե վորքան դժվար եր աշխատել այդ շահագործողի որով։ Պատահում եր, վոր վեր եյին կենում լույսը դեռ չծագած և պառկում ուշ գիշերին։ Ամբողջ որը նրանք անց եյին կացնում կալվածատիրոջ խաղողի այգիներում։ Ճարպիկ վաշխառուին դեռ Խորհրդային իշխանության որով հաջողվում եր շրջակա գյուղացիների հյութերը քամել։

Նրան հաջողվեց Խորհրդային իշխանությունից «կոնցեսիա» ստանալ, նա ինչ վոր մի պայմանագիր կնքեց և շարունակում եր Բրիտանի գյուղի բատրակներին շահագործել։

Սակայն, ինչ նվաճումներ ունեցան „Հեզամօջնիկ“ կոլտնտեսության մեջ աշխատող գյուղացիները։ Այս տարի նրանք միայն խաղողի այգուց հավաքեցին մոտ 5 հազար ցենտներ խաղող (յուրաքանչյուր հեկտարից 34 ցենտներ)։ Յեթե այս քանակությունը դրամի վերածենք — կստացի 164 հազար ոռորդի։

Բացի խաղողի այգուց կոլանտեսավարները մաս  
10 հազար ռուբլու արդյունք ստացան պարտեզի  
մրգերից:

Կոլտնտեսավարները հավաքեցին նաև՝ ցորեն—  
7.395 ցենտներ, հաճար — 10.290 ց., գարի — 7.919 ց.,  
սիմինդր — 1.218 ց., արևածաղիկ — 210 ց. և այլն:  
Ընդամենը՝ հացահատիկային, տեխնիկական և շար-  
քահերկ մշակույթներից կոլտնտեսավարները ստա-  
ցան 248.636 ռ. արդյունք: Ամբողջ տնտեսությունը  
սվեց 422.336 ռուբլի:

Ինչպես բաժանեցին կոլտնտեսավարները բերքը:  
Վորքան ստացավ պետությունը և վորքան բաժին հա-  
սավ կոլտնտեսավարներից յուրաքանչյուրին: Ամենից  
առաջ կոլտնտեսավարները պահեցին սերմացուի աշ-  
նանացանի փչանալու դեպքում ապահովման ֆոնդին  
հացահատիկների անհրաժեշտ քանակություն: Պե-  
տությունից վերցված սերմավարկը վերադարձնելու  
համար յետ դրին 3.074 ցենտներ: Գալ տարվա  
ցանքսի համար — 2.343 ցենտներ, աշնանացանը փչա-  
նալու դեպքի համար անհրաժեշտ՝ 300 ցենտներ: Բացի  
այդ բոլորից աշխատավոր և կաթնատու տավարի կերի  
համար յետ եր դրված խոտ, դարման և այլ մնա-  
ցորդներ:

Խորհրդային պետությանը կոլտնտեսականները  
տվին հացի և զանազան տեխնիկական մշակույթների  
12.565 ցենտներ, 4.600 ցենտներ խաղող և 300 ցենտ-  
ներ միրգ:

Այժմ աեսնենք, թե ինչ ստացան իրենք կոլտնտե-  
սավարները: Կոլտնտեսության վարչությունը վորոշել  
եր յուրաքանչյուր կոլտնտեսավարին իր աշխատավարձի  
հաշվին տալ  $3\frac{1}{2}$  ցենտներ պարենավորական մշակույթ-  
ներից՝ հաստկավորներին, և  $1\frac{1}{2}$  ցենտներ մինչև 3 տա-  
րեկան յերեխաներին: Տվածի 35% ցորեն եր, իսկ  
65% — հաճար:

Դաշտային աշխատանքների ժամանակաշրջանին  
ընդհանուր ոգտագործման համար յետ եր դրված  
335 ցենտներ ցորեն և հաճար: Սակայն սա դեռ բո-  
լորը չե: Նախատեսված եր, վոր յեթե կոլտնտեսա-  
վարը իր անձնական կարիքների համար կով կամ խոզ  
գնի, արտելը նրան հատկացնում է կերի հատուկ ֆոնդ,  
վոր բաղկացած և 500 ցենտներ զանազան կերի մշա-  
կույթներից և 12.000 ցենտներ մնացորդներից: Այլ  
խոսքով կոլտնտեսությունը կոլտնտեսավարների միջև  
բաժանելու և բոլոր հիշված ֆոնդերի համար հատկացրել  
եր 6.995 ցենտներ հացահատիկներ և 12.000 ցենտ-  
ներ մնացորդներ:

Բացի այդ արտելի տրամադրության տակ եյին մնում  
հավելյալ 4.289 ցենտներ հացահատիկային և տեխնի-  
կական մշակույթներից և 14.000 ցենտներ հարդ:

Այդ հավելյալներից վորոշված եր կարմիր գումակ  
կաղմել և հանձնել պետությանը, իսկ 14.000 ցենտ-  
ներ հարդը, իբրև ոգնություն, ընծայել հարեան  
„Պобедա բարակների հաղթանակ“) խորհրդային տնտեսությանը, Այդպես ել արին:

Այսպիսով, արտելի ընդհանուր մուտքը հավասար էր 422.436 ռուբլու։ Այդ գումարից կողմանտեսավարչութեան 5% մասնատքեցին իրար մեջ բաշխելու համար՝ համայնացված գույքին համապատասխան։ Գալտարվաց ցանքսի համար նրանք հատկացրին 35.381 ռ., ինվենտարի ամորտիզացիային — 6.500 ռ., գյուղատնտեսական հարկի հատուցման և ապահովագրման՝ 14.000 ռ. և այլն։

Յերբ կողմանտեսավարները հաշվի նստեցին և հաշվի առան բոլոր մասնատքումները, պարզվեց, վոր բացի այդ բոլոր մասնատքումներից իրենց տրամադրության տակ ե մուլմ 237.883 ռուբլի։ Այդ միջոցների մի մասը նրանք հատկացրին կուլտուր-կենցաղային ֆոնդին, մյուս մասը հոգուտ անաշխատունակների։

„Հեզամօջնիկ“ կողմանտեսության անդամները բացի այլ հաշվանքներ տեսան և պարզվեց, վոր միջակ Պետքուշենկոն, վորը ուներ չորս հոգուց բաղկացած ընտանիք և աշխատել եր 200 ռու, վաստակեց 470 ռ. 10 կոպ., վորից նա 227 ռ. 06 կոպ. ստացավ գրամուլ, իսկ մնացածը պարենով և կերով։

Միջակ Գարկուշը, վորը ուներ 5 հոգուց բաղկացած ընտանիք և աշխատել եր 484 ռու, վաստակեց 924 ռուբլի, վորից 754 ռ. 30 կոպ. ստացավ գրամուլ, իսկ մնացածը պարենով և կերով։

Զքափոր Զերնյակը, վոր ուներ ընտանիքի 5 անդամ (3 աշխատունակ) և աշխատել եր 439 ռու,

վաստակեց 1.053 ռ. 60 կոպ. այդ գումարից գրամուլնա ստացավ 883 ռ. 90 կոպ.։

Հինգ հոգուց բաղկացած ընտանիք — վորոնցից յերկուսը՝ անաշխատունակ — ունեցող բատրակ Խարախուլովը վաստակեց 638 ռ. 82 կոպ.։

10 հոգուց (վորոնցից 5-ը անաշխատունակ) բաղկացած ընտանիք ունեցող բատրակ Մասյուտկինը վաստակեց 1.231 ռուբ. 67 կոպ. և գրամով ստացավ 1.031 ռ. 19 կոպ.։

Հուլիսին, յերբ կողմանտեսավարները բաժանեցին բերքը, արտելի անդամները պատմեցին, թե ինչ արդյունք ստացան իրենք կողմանտեսության մեջ մտնելուց հետո։ Լսեցեք!

Սկսենք միջակ Գարկուշից։ Ինչպես արդեն նշեցինք, սրա ընտանիքը բաղկացած ե հինգ հոգուց (վորոնցից չորսը աշխատունակ են)։ Մինչև կողմանտեսության մեջ մտնելը Գարկուշի ընտանիքի տարեկան ընդհանուր մուտքը հավասար եր 738 ռուբլու։ Սակայն քանի վոր մենատնտեսավարը զգալի չափով ավելի շատ ե գյուղատնտեսական հարկ տալիս, քան կողմանտեսավարը, այդ փողերի մի մասը ծախսվում ե հարկի հատուցման, մյուսը տավարի, ընտանիքի համար մթերքներ գնելու և այլ տնտեսական ծախքերի։

Այդ բոլոր ծախքերը կատարելուց հետո Գարկուշի ընտանիքին մնում եր 98 ռուբ. 50 կոպ.։ Իսկ այժմ, յերբ Գարկուշը կողմանտեսավար դարձավ, նա գրամով, առանց այլ ծախսերը հաշվելու, ստացավ 754 ռ.

30 կոպ.: Այդքան դրամ, Գալոկուշի ասելով, ինքը  
յերբեք չեր յերազել:

Վերցնենք մի այլ կոլտնտեսավար՝ բատրակ Խա-  
րախուռովին: Մինչև կոլտնտեսության մեջ մտնելը նրա  
ընտանիքը, վոր բաղկացած եր հինգ հոգուց (յերկուսը՝  
անաշխատունակ), բոլորովին հող չուներ: Ամբողջ ըն-  
տանիքը աշխատում եր կուլակի տնտեսության մեջ:  
Աշխատել տարվա ընթացքում նա ստիպված եր ավելի  
քան 300 որ, և ինչպես աշխատել—լույսից մինչև լույս:  
Ի՞նչ եր մնում Խարախուռովի կուլակի մոտ տարած  
այդ դաժանելի աշխատանքից: Համարյա թե վոչինչ,  
քանի վոր ընդհանրապես փող նրա ձեռքը չեր ընկնում:  
Բոլորը ծախսվում եր ընտանիքի և սննդի վրա, և ապ-  
րում եյին այնպես, վոր միայն սովից չմեռնեն:

Ի՞նչ արդյունք ստացավ բատրակ Խարախուռովը  
կոլխող մտնելուց: Այս տարի նա իր ընտանիքի հետ  
աշխատել ե ընդամենը 189 որ և այդ աշխատանքի  
համար ստացել ե 638 ոռոր. 40 կոպ., վորոնցից,  
հանած բոլոր ծախքերը, ստացել ե 494 ո. 32 կ., այս-  
ինքն համարյա թե կես հազար:

Զքավոր Մասյուռակինը մինչև կոլտնտեսության մեջ  
մտնելը ստանում եր 547 ոռոր. արդյունք: Այդ գու-  
մարից, բոլոր ծախքերը կատարելուց հետո, նրա ձեռ-  
քին մնում եր 90 ո. 20 կոպ.: Իսկ այժմ Մասյուռ-  
ակինը ստանում ե 1.031 ոռոր. 19 կոպ.: Նույնը կա-  
րելի յե ասել և մնացյալ կոլտնտեսավարների վերա-  
բերմամբ:

„Հեզամօջուկ“ կոլտնտեսությունը ապացուցեց  
շրջապատի բոլոր մենատնտեսավարներին, թե վորքան  
շահավետ ե կոլեկտիվ կերպով տարվող տնտեսությունը:  
„Հեզամօջուկ“ կոլտնտեսության մեջ բերքը բաժա-  
նելուց հետո, բոլոր տեղական կոլտակների վոտքերի տակ  
արդեն հող չկար, և մենատնտեսավար չքավոր և միջակ  
գյուղացիները սկսեցին հայտարարել, վոր իրենք շատ  
մեծ ցանկություն ունեն կոլտնտեսության մեջ մանելու:

Տեսեք, թե ինչ վաստակեցին Մոսկվայի շրջանի  
կաշիրայի ռայոնի կոլտնտեսավարները: Վերցնենք որի-  
նակի համար Բողատիշչևո գյուղի „Первая пятилетка“  
(«Առաջին հնդամյակ») կոլտնտեսությունը: Միջակ  
գյուղացի Գորշկովի տնտեսությունը կոլտնտեսության  
մեջ մտավ միայն սրանից մի տարի առաջ, 1929 թ.:  
Գորշկովի ընտանիքը բաղկացած ե 11 հոգուց, վորոն-  
ցից 6-ը աշխատունակ են, իսկ մնացածները՝ անաշ-  
խատունակ: Մինչև կոլտնտեսություն մտնելը Գորշ-  
կովի գոմի մեջ կային՝ 3 ձի, 1 կով, 12 վոչխար:  
Հող—15 հեկտար ցանքսի, 0,25 հեկտար ագարակ:

1929 թվին, յերբ Գորշկովը մենատնտեսավար եր,  
նրա տնտեսությունը տալիս եր ընդամենը 1.535 ո.  
30 կ. (139 ո. 57 կ. ամեն մի շնչին): Սակայն այդ  
փողերը Գորշկովի ձեռքին չեյին մնում. փողերի մեծ  
մասը ծախսվում եր սերմանցուի, կերի գնման, գյու-  
ղատնտեսական հարկի վճարման և այլն:

«Իսկ աշխատում եյինք մենք, — պատմում ե Գորշ-  
կովը, — կարծես ճորտության որով, մեծ և փոքր միա-

սին, պատանիների ու յերեխաների մասնակցությամբ, լուսաբացից մինչև ուշ զիշեր»:

1930 թ. Գորշկովի տնտեսությունը միացավ կոլտնտեսության: Գորշկովի հողը, կենդանի և անշարժ ինվենտարը համայնացվեց, իսկ մի կով, հաճարի և առվույտի ցանքը, նաև ագարակը մնացին Գորշկովի անձնական տնորինությանը:

Ի՞նչքան վաստակեց Գորշկովը կոլտնտեսության մեջ մտնելուց հետո: Ամենից առաջ նա ստացավ 990 ռ. աշխատած ժամանակամիջոցի վարձ (միջին թվով աշխատավոր որը 1 ռուբլու հաշվով), ապա 56 ռուբլի համայնացված գույքի փոխարեն (գույքի արժեքի 1 ռ.-ուց 10 կոպ. ստանալու հաշվով), ընդամենը — 1.046 ռ.:

Բացի այդ, տնտեսության չհամայնացված մասից Գորշկովի ընտանիքը ստացավ՝ հաճարի վաճառքից 225 ռուբլի, առվույտի խոտի վաճառքից — 168 ռուբ. հարդի վաճառքից — 36 ռուբ., 170 ռուբ. արդյունք ագարակից և այլն: Ընդամենը Գորշկովը վաստակեց 2.169 ռ. կամ 197 ռուբ. 18 կոպ. ընտանիքի ամեն մի շնչի համար: Յեվ այդ նա ստացավ զուտ դրամով, առանց հաշվելու բոլոր կատարած ծախսերը: Այլ խոսքով, Գորշկովի ընտանիքը կոլտնտեսության մեջ վաստակեց 633 ռ. 70 կոպ. ավելի, քան մենատնտեսավարության մեջ, այս այն դեպքում, յեթե Գորշկովի 1929 թ. վաստակը ընդունենք իբրև զուտ վաստակ:

„Первая пятилетка“ կոլտնտեսության մի այլ կոլտնտեսավարի, չքավոր Մերգեյ Մատվեևիչ Իվանովի

ընտանիքը այս տարի վաստակեց 1.748 ռ. 80 կոպ. (249 ռ. 83 կ. ամեն մի շնչին) կամ ուղիղ յերկու անգամ ավելի, քան վաստակում եր առաջ, յերբ դեռ չեր միացել կոլտնտեսությանը: Բացի այդ, իվանովի ընտանիքը աղանովված ե սերմացուով, կերով, կարտոֆիլով և հացով:

Ահա թե ինչ ոգուտներ ե տալիս կոլտնտեսության մեջ աշխատելը:

Կաշիրայի ույոնում կան կոլտնտեսություններ, վորաեղ կոլտնտեսավարների վաստակը 4—5 անգամ ավելացել ե, համեմատած այն վաստակի հետ, վորնրանք ունենին, յերբ ապրում եյին իբրև մենատնտեսավարներ:

Կոլտնտեսության ամենալավ ազիտատորը՝ կոլտնտեսավարների մեջ բերքի բաշխումն ե հանդիսանում: Կոլտնտեսության մեջ բերքի բաշխման որինակի հիման վրա — մենատնտեսավարը ամենահաջող կերպով կարող ե համոզվել, թե ինչ ոգուտներ ե տալիս կոլտնտեսության մեջ աշխատելը:

### ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ ՍՏԱՆՈՒՄ Ե ԸՆՏ ԱՐԺԱՆՎՈՒՅՆ

Բերքի բաշխումը կոլտնտեսությունների մեջ կատարվում ե համաձայն հատուկ հրահանգի: Այդ հրահանգը նպատակ ունի այնպես բաշխել բերքը, վորապեսզի կոլտնտեսավարը ստանա իր կոլեկտիվ աշխատանքում ունեցած մասնակցությանը համապատասխան աշխատավարձ,

Իբրև ընդունված կանոն, կոլտնտեսության բոլոր մուտքերն ու բերքը բաժանվում են գործադրված աշխատանքի քանակի և վորակի կամ, այլ խոսքով, կոլտնտեսավարի աշխատած աշխատավոր որերի քանակին համապատասխան։ Սակայն այն դեպքերում, յերբ կոլտնտեսություններում կան ընտանիքներ առանց վոչ մի աշխատունակ անդամի (այրիներ, վորքեր և այլն), կոլյսողենտրի մշակած հատուկ ցուցումների համաձայն այդ ընտանիքներն ել նույնպես մասնակցում են բերքի բաշխմանը։

Բայց մյուս կողմից կոլտնտեսավարները պայքար են մղում ծույլերի ու գործից փախչողների դեմ, վորոնք խուսափում են աշխատանքից այս կամ այն պատրիվակով։ Կոլտնտեսավարները շատ լավ են հականում, վոր իրենց տնտեսության արդյունաբերությունը ամբողջապես կախումն ունի իրենցից յուրաքանչյուրի յեռանդուն մասնակցությունից ընդհանուր աշխատանքում, այն հանգամանքից, թե վորքան և աշխատել այս կամ այն կոլտնտեսավարը և ինչպես ե աշխատել։ Այս հանգամանքներին համապատասխան պետք ե բաշխվել և մուտքը կոլտնտեսավարների միջև։

Նևերկինսկից շրջանի Մուրասովկա գյուղի կոլտնտեսության մեջ չքավորները 90% են կազմում։ Կոլտնտեսության գոյության առաջին շրջանում աշխատանքը շատ ծանր եր։ Զկար վոչ մի կոպեկ փող, վոչ մի մեքենա։ Կոլտնտեսության ամբողջ հարստությունը կաղմում եր միայն 80 փութ սերմացու։

Սակայն կոլտնտեսությունը շատ շուտով վոտքի կանգնեց։ Ամենից առաջ հաղթանակեց կոլտնտեսավարների կազմակերպվածությունը, աշխատավորական դիսցիպլինան բարձրացնելու համար նրանց անխնա պայքարը։ Ի՞նչ հաջողություն ունեցավ Մուրասովկայի կոլտնտեսությունը այս տարի։

Կոլտնտեսության հացահատիկային մշակույթների ընդհանուր մուտքը հասավ 2.145 ցենտների։

Կոլտնտեսությունը ձեռքբերեց 27 ձի, մեքենաներ։

Ի՞նչ նորմա յե նշանակված ամեն մի շնչի համար։ Կոլտնտեսության ամեն մի՝ իր ընտանիքում յերկու աշխատունակ հասակավոր, յերկու 8-ից 14 տարեկան և յերկու մինչև 8 տարեկան յերեխաներ ունեցող անդամին տարեկան հասնում է 118 փութ հաց (մոտ 10 ցենտներ)։ Զհաշված այն, վոր յուրաքանչյուր կոլտնտեսավարի տրամադրության տակ կա կարտոֆիլ, բոստան, վոչխարներ և այլ՝ նրա մենատնտեսավորական ոգտագործմանը թողած գույք։

Բացի բոլոր կատարված մասնատրումներից, կոլտնտեսությունը իր համար թողեց 1.492 փութ ապրանքային հավելումներ։ Այժմ կոլտնտեսության վարչությունը բաժանում է առկա փողերը — յուրաքանչյուր կոլտնտեսավարի աշխատած որերի քանակությանը համապատասխան։

Կոլտնտեսությունների կյանքը դիտող մենատնտեսավարը կարող է արդյոք դրանից հետո հավատալ կուլակի հեքյալներին այն մասին, թե կոլտնտեսա-

վարները «սոված պայոկով են ապրում»։ Յեվ միթե ամեն մի կոլտնտեսության մեջ բերքի բաշխումը դիտող մենատնտեսավարը չի հավաստիանա այն հսկայական ոգուտների մեջ, վորոնք ստացվում են կուտնտեսություններում աշխատելուց։

Բայց մենատնտեսավարների ականջին կուլակները միշտ շշնջում են կոլտնտեսությունների «վարչական-անտեսավարական» խոշոր ծախքերի մասին։ Կուլակների այդ սուտն ել հերքվում ե փաստերով։ Հողագործության ժողովրդական կոմիսարիատը կոլխոզցենտրի հետ միասին այս տարվա ոգոստոսի 30-ին հատուկ որենք ե հրապարակել։

Այդ որենքին համապատասխան, կոլտնտեսությունների վարչական-տնտեսավարական ծախքերը վոչ մի դեպքում չպետք ե գերազանցեն ընդհանուր մուտքի 2—3%—ը այն դեպքում, յեթե կոլտնտեսությունները ունեն 15 հազար ոռոբլուց պակաս մուտք, և 1½%-ից վոչ ավելի, յեթե կոլտնտեսությունների մուտքը 15 հազար ոռոբլուց ավելի յե։

Բացի դրանք, կոլխոզցենտրը կարգադրել ե, վորպեսզի կոլտնտեսությունների մեքենաների, սերմերի, տափարի, կոնտրակտացիայի և այլն վերաբերյալ պարտքը մուծվի այնպիսի կարգով, վորպեսզի պարտքի ընդհանուր գումարը չգերազանցի անբաժան ֆոնդերի ընդհանուր գումարի կեսին։ Այս արվում ե նրա համար, վորպեսզի անբաժան ֆոնդերի յերկրորդ մասը ծախսվի

կապիտալ ծախսերը լայնացնելու վրա, այսինքն այն ծախքերի լայնացման համար, վորոնք բարելավում են իրենց, կոլտնտեսավարների կյանքը։

## ԱԶԱՏ Ե ԱՐԴՅՈՒՔ ԿՈԼԽՈԶՆԻԿԸ

Մենատնտեսավար գյուղացին շատ հաճախ ակնարկում ե կոլտնտեսության մեջ յեղած մի շարք անհարմարությունների մասին։ Ամենից առաջ նա դժողով ե այն հանգամանքից, վոր իբր թե կոլտնտեսության մեջ աշխատողը չի կարող «այլ աշխատանքով զբաղվել»։ Այդ սուտը տարածում են զլխավորապես կուլակները և նրանց արբանյակները, վորոնք ցանկանում են կոլտնտեսությունների աճումը կասեցնել։

Այդ սուտն ել ջախջախվում ե փաստերով։ Ամեն մի կոլտնտեսավարի իրավունք ե տրվում՝ զբաղվել կողմանի (ՕՏԽՈՋԻԵ) աշխատանքով։ Կողմանի աշխատանքի մեկնած կոլտնտեսավարները ոգտվում են նույնիսկ առանձին արտոնություններով։

Վոչ մի կոլտնտեսություն չի կարող կոլտնտեսավարին արգելել, որինակ, զբաղվել շինարարական աշխատանքով։ Ընդհակառակը, կոլտնտեսության վարչությունը պարտավոր ե աջակցել այդ գործին։ Յուրաքանչյուր կոլտնտեսավար կարող ե հատուկ պայմանագիր կնքել աշխատանքի բաժնի հետ և կոլխոզից հեռանալ աշխատելու համար։ Բացի այդ ամեն մի կոլտնտեսավար իրավունք ունի նույնպես աղատ ժա-

մանակը կոլտնտեսության ձիյերով փոխադրական աշխատանքներ կատարելու:

Խորհրդային իշխանության վերջին որենքներին համաձայն կոլտնտեսությունների վարչությունները պետք ե ամենայն աջակցություն և ոգնություն ցույց տան այն կոլտնտեսավարներին, վորոնք կամենում են ազատ ժամանակը ոգտագործել փոխադրական աշխատանքների համար:

Կողմնակի աշխատանքի դուրս յեկած կոլտնտեսավարներից հասանելիք մասնարումները, ըստ կառավարության վերջին վորոշման, նշանակված են նվազագույն չափերով։ Այսպես, որինակ, յուրաքանչյուր վաստակած ոռություց կոլտնտեսավարը պետք ե մուծի 3—10 կոպ.։ Յեզ յեթե այս կամ այն կոլտնտեսությունը, խախտելով այդ համոնը, 10 կոպեկից ավելի յե վերցնում, կոլտնտեսավարը իրավունք ունի դիմելու դատարանին և վերջինս պատասխանատվության կենթարկի այդպիսի կոլտնտեսության վարչությանը, իբրև Խորհրդային իշխանության որենքները և կարգադրությունները խախտողի։

Յեթե կոլտնտեսավարը մեկնում ե անորոշ փոխադրական աշխատանքի, կոլտնտեսության վարչությունը նրա մասնատրությունները պիտի հավաքի այն հաշվով, վոր այդ մասնադրությունները չգերազանցեն սահմանված չափերը։ Յեթե ձին կերակրվում ե կոլտնտեսության կերով, կոլտնտեսավարը տալիս ե իր աշխատավարձի  $60^{\circ}$ ։ Իսկ յեթե կոլտնտեսավարը

ձիուն ինքն ե կերակրում — կոլտնտեսության վարչությունը ստանում ե կոլտնտեսավարի վաստակի 30—40% ավելի:

Ինչպես տեսնում ենք, ամեն մի կոլտնտեսավար իրավունք ունի կողմնակի աշխատանքով զբաղվելու, և կոլտնտեսության վարչությունը վոչ միայն չի կարող արգելել այդ, այլև պարտական ե նույնիսկ այդ բանում աչակցություն ցույց տալ:

## ԿՈԼՏՆՈԶՆԻԿՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բացի թված առավելություններից, վոր ունի կոլտնտեսության մեջ մտած գյուղացին, նա նաև ստանում է արտօնություններ՝ հարկերի և փոխառությունների վերաբերյալ և ոգտվում է վճարումների տարկետումներով։ Ամենաշատ արտօնություններ կոլտնտեսավարը ստանում է գյուղատնտեսական հարկի վերաբերմամբ։

Ինչպես հայտնի յե, գյուղատնտեսական հարկը ամեն տարի փոփոխությունների յե յենթարկվում։ Այս փոփոխությունները կատարվում են յեղած այս կամ այն սխալները և թերությունները ուղղելու նպատակով և հնարավորի չափ գյուղի չքավորմիջակ մասը ավելորդ հարկադրումից աղատելու համար։

Կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության անելիքը կայանում ե նրա մեջ, վորպեսզի հնարավոր յեղածի չափ ոգնե չքավոր և միջակ

գյուղացիներին՝ կուլակին խստագույն ճնշելով։ Որինակ, 1929 — 30 թ. միջակ տնտեսությունները գյուղատնտեսական հարկ մտցրին նախանցյալ տարվանից 60 միլիոն ռուբլի պակաս չափով, իսկ կուլակային տնտեսությունները վճարեցին կրկնակի չափով։ Իսկ կուլակի վերաբերմամբ ճնշում ե գործադրվում, վորովհետև կուլակը Խորհրդային իշխանության ամենավոխերիմ թշնամին ե։ Անա թե ինչ եր գրում դեպի կուլակը ունենալիք վերաբերմունքի մասին ընկ. Ստալինը իր «Պատասխան ընկեր կոլխոզիներին» նամակում.

«Կուլակը Խորհրդային իշխանության թշնամին ե։ Մենք նրա հետ հաջո չենք, և չենք կարող հաշտվել։ Մեր քաղաքականությունը կուլակի վերաբերմամբ — կուլակի, իբրև դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականությունն ե։ Սա, իհարկե, չի նշանակում, վոր մենք կարող ենք նրան լիկվիդացիայի յենթարկել մի անգամից։ Բայց սա նշանակում ե, վոր մենք գործը այնպես կտանենք, վորպեսզի շրջապատենք նրան և լիկվիդացիայի յենթարկենք»։

Գյուղատնտեսական հարկը հենց այն միջոցներից մեկն ե, վորոնցով Խորհրդային իշխանությունը պայքարում ե կուլակի դեմ։ Յեկ քանի վոր կուլակի դեմ պայքար մղելու գործում մենք նոր անելիքներ ունենք — համատարած կոլեկտիվացման հիման վրա լիկվիդացիայի յենթարկել կուլակությունը, իբրև դասակարգ, — պետք եր մի կերպ փոխել նաև՝ կուլակին

գյուղատնտեսական հարկով հարկադրելու կարգը։ Ահա թե ինչու զգալի չափով ուժեղացավ կուլակների հարկավորումը։

Իսկ կոլտնտեսությունների վերաբերմամբ առհասարակ այլ կարգ ե հաստատված։ Կոլտնտեսությունները (կոմունաները, արտելները և հողը միասին մշակելու ընկերությունները) վճարում են մշտապես հարկի միևնույն տոկոսը, անկախ մուտքի գումարից։ Այլ խոսքով, այս կամ այն կոլխոզի զորեղությունը հիմք չի հանդիսանում նրանից առնվելիք գյուղատնտեսական հարկը ավելացնելու համար։

Կոմունաների գյուղատնտեսական հարկի կոպարը՝ հաստատված ե 4%, այսինքն կոմունայի մուտքի 1 ռուբլուց վերցվում է 4 կոպեկ։ 10,000 թե 30,000 ռ. մուտք կունենա կոմունան, միևնույն ե, հարկը կվերցվի հաշվելով 1 ռուբլուց — 4 կոպ։

Բոլոր արտելների և հողը միասին մշակող ընկերությունների համար հարկի կոպարը ե հաստատված 5%, այսինքն մուտքի յուրաքանչյուր ռուբլուց 5 կոպ։

Կոլտնտեսությունների հարկի կոպարի չափը զգալի կերպով պակաս ե մենատնտեսավար-միջակ գյուղացիների համար հաստատված միջին կոպարից։ Ասել ե, կոլտնտեսության մեջ չմտնող մենատնտեսավարը շատ բան ե կորցնում միայն հարկի կոպարից։ Բայց սա գեռ բոլորը չե։ Որինակ, անզոր կոլտնտեսությունները, վորոնց մի շնչի արդյունքը 30 ռուբլուց պա-

կաս ե, կառավարության վորոշման համաձայն բոլորին ազատվում են հարկից:

Այդ դեռ բոլորը չեն: Խորհրդային իշխանությունը թույլատրել են ուայոնական հարկային հանձնաժողովներին կիսով չափ պակասեցնել հարկի գումարը այն անգոր կոլտնտեսություններից, վորոնք արդյունք են ստանում 30 ոռուբրուց վոչ ավելի:

Սակայն գյուղատնտեսական հարկի վերաբերյալ արտոնությունները դրանով չեն սպառվում: Այսպես, որինակ, ըստ 1930 թ. ապրիլի 2-ի որենքի, բոլոր կոլտնտեսությունների ամբողջ համայնացված տավարը (ձիյեր, յեղներ), նաև բոլոր կովերը, խոզերը, տնային թռչունները թե համայնացված, և թե կոլտնտեսավարների մենատնտեսավար տնօրինության թողած, հավասարապես, բոլորովին ազատվում են հարկից յերկու տարի ժամանակով:

Ապա կոլտնտեսություններին մեծ արտոնություններ են արված բոստանների, սիմինդրի և արեածաղկի ցանքների վերաբերմամբ:

Բոլոր կոլտնտեսություններում ամբողջովին ազատվում են գյուղատնտեսական հարկից յերկու տարի ժամանակով բոլոր բոստանների հողերը, իսկ հին բոստանները հարկադրվում են դաշտագործության արդյունավետության նորմաններով, այսինքն վերին աստիճանի արտոնների պայմաններով:

Մեծ արտոնություններ են ստանում կոլտնտեսավարները նաև վոչ-հողագործական աշխատանք-

ների հարկադրման նկատմամբ: Այս տարի մենատնտեսավար տնտեսությունների վերաբերյալ հարկադրման չափը փոփոխության չի յենթարկվել: Իսկ կոլտնտեսավարների վոչ-հողագործական աշխատանքը հարկադրվում ե տարբեր չափերով, նայած այն հանգամանքին թե՝ ունի, արդյոք, կոլտնտեսության անդամը անհատական տնտեսություն, թե վոչ: Սակայն այս հանգամանքներում ել կոլտնտեսավարը համեմատած մենատնտեսավարի հետ շատ բան ե շահում:

Յեթե կոլտնտեսության անդամը անհատական տնտեսություն ունի, նրա վոչ-հողագործական վաստակից մեխանիկորեն հանվում է կոլտնտեսության հանձնված մասը, իսկ մնացածմասը հարկադրվում է, ինչպես և անհատական տնտեսությունները:

Յեթե կոլտնտեսության անդամը անհատական տնտեսություն չունի, սաացվում է ընդհակառակը՝ նրա վաստակից դարձյալ մեխանիկորեն հանվում է կոլտնտեսության հանձնված մասը, իսկ մնացած գումարը հարկադրվում է արդեն վոչ թե գյուղատնտեսական հարկից, այլ յեկամտային հարկով:

Այս բոլորից հետո ամեն մի մենատնտեսավարի համար վորոշակի պարզ պիտի լինեն այն հսկայական առավելություններն ու արտոնությունները, վոր ստանում են կոլտնտեսության մեջ մտնող գյուղացիները:

## ԿԵՍ ՄԻԼԻԱՐԴ ՌՈՒԲԼՈՒ ՎԱՐԿ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ

Խորհրդային իշխանությունը ոգնում ե կոլտնտեսություններին նաև վարկով։ Այս տարի, որինակ, բաց ե թողփած կոլտնտեսություններին 500 միլիոն ռուբլու վարկ։ Այդ գումարին պետք ե ավելացնել և այն 60 միլիոն ռուբլին, վոր հատկացված ե կոլտնտեսություններին արեածաղկի, սիմինդրի և այլն կոնտրակտացիայով։

Ասել ե, կոլտնտեսությունները, համեմատած անհատական տնտեսությունների հետ, հսկայական արտոնություններ ունեն և վարկի տեսակետից։ Բոլոր այդ արտոնություններից զուրկ ե մենատնտեսավարը։ Այդ արտոնություններից զրկվում ե նույնակես և այն գյուղացին, վորը այս կամ այն պատճառով հեռանում ե կոլտնտեսությունից։

«Հեռանալով կոլտնտեսությունից—ասում ե ընկ. Ստալինը, — նրանք, գյուղացիները լավ չեն անում, նրանք ընթանում են հակառակ իրենց սեփական շահերի, քանի վոր միայն կոլտնտեսություններն են նրանց կարիքից և խավարից հանող յելքը։ Դուրս գալով կոլտնտեսությունից, նրանք սաեղծում են իրենց համար ծանր կացություն, քանի վոր զրկում են իրենց այն արտոնություններից և շահերից, վորը տալիս ե կոլտնտեսություններին Խորհրդային իշխանությունը։

Հաստատ կերպով կոլեկտիվացման ճամբան բռնած կոլտնտեսությունները շատ մեծ արտոնություններ

են ստանում և պարտքերի տարկետման վերաբերմբ։ Խորհրդային իշխանությունը հատուկ վորոշումով յետաձգել ե մինչև 1930 թ. նոյեմբերի 1-ը պարտքը ըստ այն վարկերի, վոր վերաբերում են կոլտնտեսության մեջ մտած տնտեսություններին, նաև ըստ այն պարտքերի, վոր այդ տնտեսություններից փոխանցվել են կոլտնտեսություններին։

1930 թ. ապրիլի 2-ին Խորհրդային իշխանությունը մի որենք հրատարակեց, վորի համաձայն կոլտնտեսության մեջ մտած բոլոր տնտեսությունները ազատվում են այն պարտքից, վոր բարդվել ե մինչև կոլտնտեսության մեջ մտնելը՝ հողաշինարարության համար։

Այս բոլոր արտոնությունները շատ մեծ նշանակություն ունեն մենատնտեսավարների համար, քանի վոր յուրաքանչյուր գյուղացի պարտական ե պետությանը այս կամ այն մուծումներ անել։ Հենց, որինակ, տուգանքները։ Շատ գյուղացիների տնտեսություններ տուգանված են իշխանության վորեւե վորոշումները չկատարելու, գյուղատնտեսական հարկը չմացնելու համար և այն։ Բայց յեթե մենատնտեսավարը մտնում ե կոլտնտեսության մեջ, նա իսկույն և յեթե ազատվում ե թե հարկի որենքը խախտելու և թե այլ հանցանքների համար, վորոնք գործված են մինչև 1930 թ. ապրիլի 2-ը, նշանակված տուգանքի գեռ չհատուցած մասի վճարումից։

Յեթե մենատնտեսավարը մտել ե կոլտնտեսության մեջ, նրա վերաբերմաք յեղած բոլոր այն

գատական գործերն ու դատավճիռները, վորոնք ընդունված են վերել մատնանշված խախտումների կապակցությամբ մինչև 1930 թ. ապրի 2-ը, նույնպես անմիջապես դադարեցվում են:

Բոլոր կոլտնտեսությունների համար հաստատված են արտոնություններ նաև ըստ ինքնահարկման:

1930 — 31 թ. ընթացքում բոլոր կոլտնտեսությունները ազատված են ինքնահարկումից կառավարության հասուկ վորոշման համաձայն: Կոլտնտեսությունները ազատվում են նաև կուլակների կոնֆիսկացիայի յենթարկված և կոլտնտեսությանը հանձնած գույքի պարագի վճարումից:

Շատ մեծ նշանակություն ունի գյուղացու համար հողաշինարարությունը: Մենատնտեսավարը յերբեմն շատ փող ե ծախսում հողաշինարարության համար: Իսկ կոլտնտեսությունները, ըստ կառավարության հատուկ վորոշման, ստանում են մի շարք արտոնություններ և հողաշինարարության վերաբերմամբ: Բացի այդ, բոլոր հողաշինարարական աշխատանքները կոլտնտեսությունների համար կատարվում են առաջին հերթին, ըստ վորում կոլտնտեսություններին արվում են ամենալավ և ամենահարմար հողերը:

Կոլեկտիվ տնտեսություններին հերթից դուրս բաց են թողնվում զանազան հանքային պարարտանյութեր, ցեղային սեռողներ, զանազան շինարարական նյութեր և այլն:

Խորհրդային կառավարությունը գործ ե դնում բոլոր միջոցները, վորագեսղի կոլտնտեսությունները ապահովված լինեն բարձր տեխնիկայով: Տրակտորներ, կոմբայններ, իրածակապիչներ, սերմանիչներ, — այս բոլորը առաջին հերթին և վարկով արվում ե կոլտնտեսություններին:

ԻՆՉՈՐ ՅԵ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈԳՆՈՒՄ  
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Կուլակները և նրանց արբանյակները ամեն կերպ աշխատում են քողարկել՝ Խորհրդային իշխանության կողմից կոլտնտեսություններին տված արտոնությունները և դրանով մենատնտեսավարների ուշադրությունը կոլտնտեսությունից հեռացնել:

Սակայն ամեն մի գիտակից մենատնտեսավար շատ լավ ե հասկանում կուլակային քաղաքականությունը, և կուլակները, ինարկե, չեն կարող կասեցնել կոլեկտիվացման հաջողությունները: Այսորվա մենատնտեսավարը — վաղվա կոլտնտեսավարն ե:

Իսկ Խորհրդային իշխանությունը առաջիւ պետ շարունակելու յե իր սպնությունը ցույց տալ կոլտնտեսավարներին:

Ահա թե ինչ ե ասում այդ մասին ընկ. Ստալինը իր «Պատասխան ընկեր = կոլխոզնիկներին» հոդվածում.

«Խորհրդային իշխանությունը արտոնությունները և առավելություն կտա կոլտնտեսություններին՝ հան-

գեալ անհատական անտեսությունների։ Սա նշանակում է, վոր իշխանությունը կոլտնտեսություններին արտոնություններ կտա և հող տալու իմաստով, և մեքենաներ, տրակտորներ, սերմացու մատակարարելու իմաստով, և հարկատրման թեթևացման իմաստով, և վարկ հատկացնելու իմաստով։

Ինչու յե Խորհրդային իշխանությունը արտոնություններ և առավելություններ տալիս կոլտնտեսություններին։ Վորովհետեւ կոլտնտեսությունը միակ միջոցն է, վոր կարող ե գյուղացիներին ազատել կարիքից։

Վորովհետեւ կոլտնտեսություններին տրված առավել ոգնությունը՝ չքավոր և միջակ գյուղացիությանը ոգնելու ամենալիրական ձևն է։

Զմոռանանք ընկ. Ստալինի խոսքերը՝ «կոլտնտեսությունը միակ միջոցն է, վոր կարող ե գյուղացուն ազատել կարիքից»։

Այս ճշմարտությունը հետզհետեւ գիտակցում են մենատնտեսավարների նորանոր մասսաներ։ Թող այժմ կոլտնտեսական շարժումը ընդգրկի Խորհրդային Միության դեռ վոչ բոլոր գյուղացիական տնտեսությունները։ Թող դեռ շատ ուայններում կոլտնտեսությունները շրջապատված լինեն մենատնտեսավարների խիս պատով։ Միենույն ե, կոլեկտիվացման հաղթանակը ապահովված է։

Այդ հաղթանակը ապահովված է, քանի վոր գյուղացիական մասսաները որեցոր ավելի յեն հավաստիանում կոլտնտեսությունների շահավետության և առա-

վելությունների մեջ։ Այդ հաղթանակը ապահովված է, վորովհետև կոլտնտեսությունները իրենց աշխատանքով ցույց տվին, թե ինչպես պետք ե աշխատել, ինչպես պետք ե հաղթահարել սևահողի խորունկ շերտերը!«

## ՆՈՐ ԿՈԼԵՈՉՆԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ինչպես արդեն սկզբում ասացինք, ինքնահոսի վրա հույս դնել վոչ մի դեպքում չի կարելի, Յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք ե որեցոր աշխատի մենատնտեսավարների նոր խմբեր գրավել դեպի կոլտնտեսությունը։ Ահա թե ինչու Խորհրդային իշխանությունը իր իրական և ամուր նեցուկն ե համարում միայն այն կոլտնտեսությունը, վորը լայնացնում ե իր՝ մենատնտեսավարներին կոլտնտեսության մեջ ներգրավելու աշխատանքը։

Շատ մենատնտեսավարներ վաղուց արդեն կոլտնտեսության մեջ կլինելին, յեթե նրանց կարգին բացատրելին, թե ինչ ե կոլտնտեսությունը, ինչպես ե բաշխվում կոլտնտեսության մեջ բերքը, ինչ վաստակ ե համարում յուրաքանչյուր կոլտնտեսավարին, ինչ առավելություններ և արտոնություններ ե տալիս կոլտնտեսությունը։

Յեվ կուսակցությունը շատ արդարացի գործ ե անում, պարտավորեցնելով իր բոլոր տեղական կազմակերպություններին խստագույն աշխատել և բա-

ցատրել մենատնտեսավարներին կոլեկտիվացման տվյած  
շահերն ու առավելությունները:

Իսկ այն բջիջներն ու հիմնարկները, վորոնք այդ  
չեն իրազործում, փաստորեն ոգնում են կուլակնե-  
րին և կուլակների համհարզներին:

Յուրաքանչյուր տեղական կազմակերպություն  
պետք է իր աշխատանքը կատարի հարյուրավոր և  
հազարավոր նոր մենատնտեսավարներ կոլտնտեսու-  
թյան մեջ առնելու լոգունգով:

Այդ առթիվ մոտ անցյալում կոլլուգենարը հանեց  
մի շատ կարևոր վորոշում, վորի համաձայն կոլտնտե-  
սությունները գյուղերում մենատնտեսավարների ընդ-  
հանուր ժողովներ պիտի կազմակերպեն և այդ ժողով-  
ներում մենատնտեսավարներին հաշիվ տան իրենց  
կատարած աշխատանքի մասին:

Պետք է պատմել մենատնտեսավարներին, թե ինչ  
արդյունքներ ունեցավ կոլտնտեսությունը կոլեկտիվ  
աշխատանքի հետևանքով, ինչ բերք ստացավ, ինչպես  
և կատարվում հացամթերումը, ինչպես են կոլտնտե-  
սության մեջ բաշխվում արդյունքները, վորքան և  
փաստակել յուրաքանչյուր կոլտնտեսավարը և այլն:

Պետք է բացատրել և պատմել մենատնտեսավա-  
րին, թե ինչ վաստակեց այս տարի չքավոր Միդորովը,  
կամ միջակ Սեմյոնովը, վորքան եյին նրանք վաստա-  
կում առաջ, վորքան հաց ստացան նրանք այս տարի,  
և վորքան հավելյալ մնաց:

Այդ ժողովներում պետք է վոչ միայն պարծենա,  
հաջողություններով, այլ պետք է նաև պատմել այն  
սխալների մասին, վոր դեռ մեծ թվով կատարվում են:  
Այս պետք է նրա համար, վորպեսզի մենատնտեսա-  
վարի հետ միասին խորհնեն այդ սխալները ուղղելու:

Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ պետք է  
կոլտնտեսավար տղամարդկանց և կանանց առանձին  
մի խմբակ կազմվի, վորը բացատրի մենատնտեսավար-  
ներին կոլեկտիվացման շահավետությունը և մերկացնի  
կուլակների՝ կոլտնտեսության դեմ տարած ագիտա-  
ցիան: Բացի այդ բացատրական-ագիտացիոն աշխա-  
տանքից կոլտնտեսությունները պետք է մենատնտե-  
սավարներին սխատեմատիկ ոգնություն հասցնեն ցանքսը  
հավաքելու, կալմելու, ցանելու և հացամթերման գոր-  
ծում — ամենուրեք կոլտնտեսությունները պետք է ոգ-  
նեն չքավոր և միջակ տնտեսություններին, վորոնք ինչ-  
ինչ պատճառով դեռ կոլտնտեսության մեջ չեն մտել:

Այստեղ, ուր այդ հնարավոր ե, պետք է մենատըն-  
տեսավարներից և գյուղում լավ համբավ ունեցող ակտի-  
վիստներից հատուկ նախաձեռնող խմբակներ ստեղծել:  
Այդպիսի խմբակները կաջակցեն կոլտնտեսություն-  
ներին նորանոր անդամներ գրավելու իրենց շարքերը,  
կոլեկտիվացման գործը միասին կառուցելու համար:

Ամբողջ աշխատանքը տանելով սոցիալիստական  
մրցումով, կոլտնտեսությունները չպետք է մոռանան  
այն, վոր մենատնտեսավարների մեջ աշխատելը —  
շատ կարևոր աշխատանք է: Այդ աշխատանքը չպետք

Ե կամպանիայի բնույթ ունենա, այսինքն կարճ ժամանակ տարվի և ապա դադարեցվի։ Մենատնտեսավարների հետ պետք ե աշխատել սիստեմատիկ կերպով, համառորեն և մշտապես, որեցոր։

Պետք ե այնպիսի գրություն ստեղծել, վոր կոլտնտեսության աշխատանքի, նրա արդյունավետության և բերքատվության մասին իմանա յուրաքանչյուր մենատնտեսավար, գյուղի յուրաքանչյուր բատրակ, չքավոր և միջակ ընտանիքը։

Յեթե այդ հաջողվի անել — մենք կարագացնենք համատարած կոլեկտիվացման իրագործումը, կմոտեցնենք այն որը, յերբ կոլեկտիվացումը վերջին մահացու հարվածը կհասցնի կուլակների կորսույան դատապարտված դասակարգին։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

Կոլտնտեսությունները աճում են . . . . .	3
Հացահատիկային պրոբլեմից հետո — գլխավոր ուշադրությունը անասնապահությանը . . . . .	7
Ի՞նչ ոգում և տալիս կոլտնտեսությունը . . . . .	12
Մենատնտեսավարների կորուստները . . . . .	24
Յուրաքանչյուրը ստանում և ըստ արժանվույն . . . . .	33
Ազատ և արդյոք կոլխոզները . . . . .	37
Կոլխոզներիների արտոնությունները . . . . .	39
Կես միլիարդությունը. վարկ կոլխոզներին . . . . .	44
Ինչու յե խորհրդային իշխանությունը ոգնում կոլտնտեսություններին . . . . .	47
Նոր կոլխոզների, համար . . . . .	49



10 400.

3444

29.7.92

С.-Х. 3



---

Н. ЗУБОВ

Что теряет  
единоличник

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР  
Москва, центр, Никольская, 10